ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

24 հունիսի 2021թ. թիվ 904

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՄԱՍՆԱԳԵՏԻ (95-3.6-Մ2-1) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 11-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնի գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման, պաշտոնների ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների ու պարտականությունների, անվանացանկի վարման, ինչպես նաև տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանությունը հաստատելու մասին» N 3-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի 4)-րդ ենթակետով՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Սահմանել ՀՀ Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետի (95-3.6-Մ2-1) մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

6/24/2021

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. հունիսի 24
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետարանի
գլխավոր քարտուղարի
2021թ. հունիսի 24-ի
թիվ 904 հրամանի

Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 95-3.6-Մ2-1) համար սահմանվող մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները

I. Իրավական գիտելիքներ

1) ՀՀ Լոռու մարզպետարանի գործունեության ոլորտը կարգավորող և տվյալ պաշտոնի առանձնահատկություններից բխող օրենքների իմացություն՝

ա) ՀՀ Սահմանադրություն
բ) «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
գ) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
դ) «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
ե) «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
զ) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
է) «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
ը) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
թ) «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
ժ) «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
ի) «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
լ) «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

2) ՀՀ Լոռու մարզպետարանի գործունեության ոլորտը կարգավորող և տվյալ պաշտոնի առանձնահատկություններից բխող ենթաօրենսդրական ակտերի իմացություն՝

ա) «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 1510-Ն որոշում.
բ) «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 333-Ն որոշում.
գ) «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկատվության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշում.

II. Այլ գիտելիքներ

1) Համակարգչից և այլ տեխնիկական միջոցներից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրերի իմացություն

ա) Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012:

բ) Ինֆորմատիկա 8-րդ դասարան: Հանրակրթական ավագ դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2013:

2) Գործնական գրագրության, փաստաթղթերի, գրավոր տեքստերի գրագետ շարադրման սկզբունքների և կանոնների իմացություն

ա) «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ.

3) Գործնական վիճակագրություն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ

ա) Կիրառական վիճակագրության հիմունքներ, Մ.Է. Մովսիսյան, Երևան 2018:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

6/24/2021

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ